

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՏԵՍՉՈՒԹՅԱՆ  
ՏԱՎՈՒՇԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ  
ԲԱԺԻՆ



МИНИСТЕРСТВО  
ОХРАНЫ ПРИРОДЫ РА  
АППАРАТ  
ПРИРОДООХРАННАЯ  
ГОСУДАРСТВЕННАЯ  
ИНСПЕКЦИЯ  
ТАВУШСКИЙ  
РЕГИОНАЛЬНЫЙ ОТДЕЛ

ՀՀ Տավուշի մարզ

Ք. Իջևան Սահմանադրության 1 փող.

023.08.8-528

« 13 » ----- 08 ----- 2014թ.

Իջևանի օրիուս կենտրոնի  
համակարգող Դ. Ղազարյանին

Հարգելի պարոն Դ. Ղազարյան

Ի պատասխան Ձեր հարցմանը՝ կապված ՀՀ Տավուշի մարզի Կողբ գյուղում Հովիկ Աբովյանի կողմից գորշ արջեր անազատ պայմաններում պահելու հետ, հայտնում ենք, որ ՀՀ բնապահպանության նախարարի կողմից տրվել է հանձնարարական ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության ՀՀ Տավուշի մարզի տարածքային բաժնին, կենդանիների պահման ու խնամքի պայմանները ուսումնասիրելու վերաբերյալ:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ անազատ պայմաններում պահվող կենդանիների համար ապահովված են ՀՀ կառավարության կողմից սահմանված նորմերին համապատասխան պայմաններ և նրանք գտնվում են բարվոք և խնամված վիճակում:

Անհրաժեշտ է նշել, որ համաձայն «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի (27.1-ին հոդվածը լրաց. 26.03.14 ՀՕ-6-Ն) անազատ պայմաններում վայրի կենդանիները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիները, կարող են պահվել նաև ֆիզիկական անձանց կողմից ստեղծված և դրանց կենսագործունեությունը ապահովող առանձնացված տարածքներում:

ՀՀ բնապահպանության նախարարի հանձնարարությամբ սահմանվել է մշտական վերահսկողություն: Իսկ մարզպետ Հ. Աբովյանը համաձայնվել է կենդանիների վերաբնակեցման (կլիմայավարժեցում) գործընթացի ավարտից հետո սահմանված կարգով կենդանիներին բաց թողնել վայրի բնություն:

Բաժնի պետ

Ա. Մանուչարյան